

ՄՄԿ Մեկնաբանություն 31

Հասույթ. բարտերային գործարքներ, որոնք ներառում են գովազդային ծառայություններ

Հղումներ

- ՀՀՄՍ 8 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ
- ՀՀՄՍ 18 Հասույթ

Հարցադրում

- 1 Կազմակերպությունը (Վաճառող) կարող է կնքել գովազդային ծառայություններ մատուցելու և դրա դիմաց հաճախորդից (Հաճախորդ) գովազդային ծառայություններ ստանալու բարտերային գործարք: Գովազդիչը կարող են տեղադրվել ինտերնետում կամ ցուցանակների վրա, հեռարձակվել հեռուստատեսությամբ կամ ռադիոյով, տպագրվել թերթերում կամ ամսագրերում, իրականացվել այլ միջոցներով:
- 2 Երբեմն կազմակերպությունների միջև դրամական միջոցների կամ այլ հատուցման փոխանակում տեղի չի ունենում: Որոշ այլ դեպքերում տեղի է ունենում հավասար կամ գրեթե հավասար չափով դրամական միջոցների կամ այլ հատուցման փոխանակում:
- 3 Վաճառողը, որն իր սովորական գործունեության ընթացքում մատուցում է գովազդային ծառայություններ, գովազդ ներառող բարտերային գործարքից ճանաչում է հասույթ՝ ըստ ՀՀՄՍ 18-ի, այն ժամանակ, երբ, այլ չափանիշների հետ մեկտեղ, փոխանակվող ծառայությունները տարաբնույթ են (ՀՀՄՍ 18.12) և հասույթի գումարը կարող է արժանահավատորեն չափվել (ՀՀՄՍ 18.12(ա)): Սույն Մեկնաբանությունը կիրառվում է միայն տարաբնույթ գովազդային ծառայությունների փոխանակման դեպքում: Համանման գովազդային ծառայությունների փոխանակումը՝ ըստ ՖՀՄՍ 18-ի, հասույթ առաջացնող գործարք չէ:
- 4 Խնդիրն այն է, թե ինչ հանգամանքներում Վաճառողը կարող է արժանահավատորեն չափել հասույթը՝ բարտերային գործարքում ստացված կամ մատուցված գովազդային ծառայությունների իրական արժեքով:

Փոխհամաձայնություն

- 5 Գովազդ ներառող բարտերային գործարքից հասույթը չի կարող արժանահավատորեն չափվել ստացված գովազդային ծառայությունների իրական արժեքով: Այնուամենայնիվ Վաճառողը կարող է արժանահավատորեն հասույթն չափել բարտերային գործարքում իր կողմից մատուցվող գովազդային ծառայությունների իրական արժեքով՝ անդրադառնալով միայն այն ոչ բարտերային գործարքներին, որոնք՝
 - ա) ներառում են բարտերային գործարքի գովազդին համանման գովազդ.
 - բ) հաճախ են տեղի ունենում.
 - գ) ներկայացնում են գործարքների քանակի և գումարի գերակշռող մասը՝ համեմատած բոլոր այն գովազդների հետ, որոնք համանման են բարտերային գործարքի գովազդին.
 - դ) ներառում են դրամական միջոցներով և/կամ արժանահավատորեն չափելի իրական արժեք ունեցող այլ ձևով հատուցում (օրինակ՝ շուկայում ազատ շրջանառվող արժեթղթեր, ոչ դրամային ակտիվներ և այլ ծառայություններ).
 - ե) չեն ներառում նույն պայմանագրային կողմը, ինչ բարտերային գործարքում:

Փոխհամաձայնության ամսաթիվը

2001 թ. մայիս

Ուժի մեջ մտնելը

Սույն մեկնաբանությունը ուժի մեջ է մտնում 2001 թ. դեկտեմբերի 31-ին: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները պետք է հաշվառվեն ՀՀՄՍ 8-ի համաձայն: